26.05.2022թ.
349-89

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
նախարար Գնել Սանոսյանին

## Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Սանոսյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոն է դիմել «Կանաչ Հայաստան» բնապահպանական, կրթական ՀԿ-ն՝ խնդրելով աջակցել տեղեկություն ստանալու հարցում:

2022 թվականի ապրիլի 25-ին ՀԿ-ն ուղարկել է տեղեկություն ստանալու հարցում՝ խնդրելով տրամադրել տեղեկություններ 44-օրյա պատերազմից հետևանքով Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում ջրից զրկված բնակիչների վերաբերյալ: Մայիսի 5-ին տրամադրած պատասխան գրությամբ Նախարարությունը մերժել էր տրամադրել տեղեկությունը՝ հղում տալով «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի 8-րդ հոդվածին՝ չհստակեցնելով մերժման հիմքը (պատասխանը՝ կից):

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի ՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները:

1. Տրամադրել Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի այն համայնքների/բնակավայրերի անվանացանկը, որոնք 44-օրյա պատերազմից հետևանքով զրկվել են խմելու և ոռոգման ջրից:
2. Եթե նմանօրինակ համայնքներ/բնակավայրեր կան նաև ՀՀ այլ մարզերում, ապա խնդրում ենք տրամադրել նաև դրանց ցանկը:
3. Համայնքների/բնակավայրերի անվանացանկում հնարավորինս հստակ ներկայացնել առկա իրավիճակը՝ նշելով, թե դրանցից որը կոնկրետ որ ջրային ռեսուրսի հետ կապված խնդիրների կամ ինչ պատճառով են կորցրել ջրից օգտվելու հնարավորությունը (ռեսուրսը հակառակորդին անցնելու, սահմանապահ զինվորներից վախենալու և այլն):

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով:***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

**Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)**
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@[illegible] Էջ՝ [illegible]